ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1958 Общественные науки

Լ. Խաչիկյան

ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, X—XIV ԴԱՐԵՐՈՒՄ*

Արաբական դարավոր, ծանր ու մղձավանջային տիրակալության դեմ հայ ժողովրդի մղած հերոսական մարտերի ու ապստամբությունների հետևանքով, IX-րդ դարի 2-րդ կեսին Հայաստանի մեծ մասը թոթափեց օտար բռնակալական լուծը և վերնվաճեց իր անկախությունը. 886 իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին օծվեց Հայոց թագավոր։

Աշոտը և նրան հաջորդող Բագրատունի թագավորները ձգտում էին իրենց իշխանության տակ միավորել հայկական բոլոր հողերը ու ստեղծել միասնական և ուժեղ հայկական պետություն։ Նրանց ջանքերը, սակայն, չպսակվեցին հաջողությամբ. շուտով պատմական Հայաստանի հողի վրա ստեղծվեցին կիսանկախ մի քանի այլ մանր իշխանություններ՝ Վասպուրականի և Սյունյաց, իսկ այնուհետև նաև Կարսի ու Զորագետի մանր թագավորությունները։

Չնայած միջնադարյան բախումները և արաբական ամիրայություններին դեմ մղած մարտերը IX—X-րդ դարերում մերթ ընդ մերթ վրդովում էին խաղաղությունը, բայց, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը շուրջ մեկ հարյուրամյակ զերծ մնաց օտար նվաճողների հրոսակախմբերի արշավանքներից։

Հարյուրամյա խաղաղության այդ ժամանակաշրջանում, արտադրողական ուժերի հետագա զարգացման և երկրի տնտեսական կյանքի վերելքի հետևանքով, ֆեոդալիզմը Հայաստանում թեւակոխեց իր զարգացման երկրորդ («զարգացած ֆեոդալիզմի») փուլը։

Սկզբնաղբյուրները հնարավորություն են ընձեռում հետևելու զարգացած ֆեոդալիզմին հատուկ տնտեսական ու սոցիալական կարգի մի շարք նոր երևույթների արմատավորման կամ աննախընթաց խորացման փաստերին։ Այսպես, Հայաստանում ամենուրեք սկսում են հանդես գալ ու զարգանալ ֆեոդալական խոշոր տնտեսություններ. կալվածատերերն ու վանքերը, ի հաշիվ գյուղական համայնքների հողարաժինների, ընդարձակում են իրենց տնտեսությունները, կոռային աշխատանքի օգտագործումը այդ տնտեսություններում հասնում է աննախընթաց չափերի, շինականին հողին ամրացնելու պրոցեսը լայն ծավալ է ստանում։ Կալվածատերը կապվում է շուկայի հետ՝ վաճառքի հանելով գյուղատնտեսական մթերքները նորաստեղծ ու բազմամարդ քաղաքներում և այլն։

Քաղաքների հիմնադրման ու աճի տեմպերը Հայաստանում զարմանք են պատճառում ուսումնասիրողներին։ Մի քանի տասնամյակների ընթացքում Հայաստանի տարբեր նահանգներում, հաճախ կողք-կողքի, ծագում ու բարգավաճում էին արհեստագործության ու առևտրի նոր և նոր կենտրոններ։

---

* Լ. Խաչիկյանի հոդվածով խմբագրությունը շարունակում է մտքերի փոխանակությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի մասին X—XIV դարերում։ Սկիզբը տե՛ս «Տեղեկագրի» 1955, № 12, 1956, №№ 5, 6։ Խմբ.։

Դրանց առաջացմանն ու զարգացմանը մեծապես նպաստում էին նաև տարանցիկ առևտրի միջազգային նշանակություն ունեցող երկու այն բանուկ ուղեգծերը, որոնք, անցնելով Հայաստանի վրայով, կապում էին Արևելքը Արևմուտքի հետ։

Հայկական նորաստեղծ այդ քաղաքներում արհեստագործությունն ու առևտուրը մեծ զարգացման են հասնում, գրամական մեծ գումարներ են կենտրոնանում առևտրա-վաշխառուական շերտերի ձեռքին, կառուցվում են ճարտարապետական հոյակապ կոթողներ, ստեղծվում է քաղաքային կուլտուրա ու գրականություն։

Ճորտական լծի ծանրացումն ու շահագործման սաստկացումը գյուղում և քաղաքում, բնականաբար, հանդիպում է աշխատավոր մասսաների ակտիվ դիմադրությանը. Հայաստանի մի շարք շրջաններում բռնկվում են գյուղացիության և քաղաքային բնակչության ապստամբություններ։ Մշակվում է աշխատավորության պայքարի գաղափարախոսությունը՝ թոնդրակյան ուսմունքը։

Երկրի սոցիալ-տնտեսական ու կուլտուրական կյանքում առաջացած այս և հարակից ուշագրավ երևույթները չէին կարող չգրավել հայ ժողովրդի պատմության մասնագետների սևեռուն ուշադրությունը։ Եվ իրոք, մի շարք անվանի հայագետներ, զբաղվելով X—XIV դարերի պատմության, գրականության ու արվեստի հարցերով, մեր դարի 20-ական թվականներից սկսած, աշխատեցին պարզել նշված երևույթների բովանդակությունը։

Ցավոք, 1930-ական թվականներին սովետական պատմագրությունը դեռևս չէր ձերբազատվել Պոկրովսկու «շկոլայի» ազդեցությունից, որի բազմաթիվ սիալ դրույթներից մեկն էլ կայանում էր առևտրական կապիտալի պատմական դերի գերագնահատման մեջ։ Կարծում ենք, որ մասամբ Պոկրովսկու «շկոլայի» ազդեցությամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ X—XIV դարերի հայ ժողովրդի պատմության հարցերով զբաղվող մասնագետների մի մասը՝ ճիշտ եզրակացությունների չհանգեց այդ ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը որոշելիս և կուլտուրական երևույթները գնահատելիս։

Առաջիններից մեկը, որն անդրադարձավ այդ հարցերին՝ նշանավոր հայագետ պրոֆ. Ն. Ադոնցն էր։ «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում» խորագրով իր հոդվածում նա մեկն՝ հայտարարեց, որ, իբր, Բագրատունյաց Հայաստանում քայքայվում էր ֆեոդալական արտադրաձևը և ձևակերպվում բուրժուական իրավակարգ. «Մինչ Անիում մարում էին ֆեոդալականության վերջին ճառագայթները,—եզրակացրեց նա,—Արևմուտքը նոր էր ողջունում նրա արշալույսը։ Հասարակագիտական տեսակետից արևելքին էր պատկանում առաջնությունը, և նա էր կարապետը նոր բուրժուական իրավակարգի»[1]։

Ադոնցն իր այս հայտարարությունն արեց այնպիսի մի աշխատության մեջ, որն անմիջապես չէր առնչվում Հայաստանի X—XIV դարերի պատմության, և, մանավանդ, այդ շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների հարցերին։ Ուստի նրա հայտարարությունը լուրջ հետևանք չունեցավ։

Այլ նշանակություն ունեցավ հանգուցյալ ակադեմիկոս Հ. Մանանդյանի 1930 թ. հրատարակված և 1954 թ. վերահրատարակված „О торговле и го-

[1] Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, 1948, էջ 48։

родах Армении в связи с мировой торговлей...“ մեծարժեք մենագրությունը։ Այստեղ հեղինակը, ի մի բերելով IX—X դարերում Հայաստանում ստեղծված քաղաքների միջազգային նշանակությունը բացահայտող փաստերը, հանգեց այն եզրակացության, որ «Ուսումնասիրվող ժամանակաշրջանում անտնտեսական կյանքը Հայաստանում վերակառուցվում էր նոր սկզբունքներով։ Արհեստների և առևտրի զարգացումը, ազգային բուրժուազիայի[1] տնտեսարար կշռի բարձրացումը, քաղաքային կենտրոնների ծաղկումն ու աճը նպաստում էին, անտարակույս, տնտեսական ու սոցիալական նոր հարաբերությունների ստեղծավորմանը և, հնարավոր է, որ նոր այդ ուժերը ժամանակի ընթացքում առաջ կբերեին ֆեոդալական կարգի կործանում, եթե միայն այդ զարգացումը չկանխվեր XI դարի կեսերի անցուդարձերով ու սելջուկների արշավանքով»[2]։

Նույն այս միտքը, ավելի որոշակի արտահայտություններով, ակադ. Հ. Մանանդյանը կրկնեց 1940 թ. լույս ընծայած «Հայաստանի քաղաքները X—XI դարերում» ուսումնասիրության մեջ, գրելով հետևյալը. «Տնտեսական այն երևույթները, որ վերև մենք մատնանշեցինք... հատկանշական են ու բնորոշ քայքայվող ֆեոդալիզմի համար, որի սկիզբը կարելի է ըստ իս Հայաստանում ենթադրել հենց այս (X—XI դդ.—Հ. Մ.) ժամանակաշրջանում։ Եվ կամ «Մեր վերոհիշյալ փաստական դիտողություններից... կարելի է ըստ իս հետևցնել, որ առևտրի, քաղաքների, արդյունագործության և դրամական ու ապրանքային տնտեսության բուռն ու արագ աճմամբ Հայաստանում ևս ֆեոդալիզմը սկսել էր քայքայվել, և որ հասարակական կյանքն այնտեղ ևս կարող էր վերակառուցվել առաջադեմ նոր հիմքերի վրա, ինչպես այդ հինգ դար հետո տեղի ունեցավ Արևմտյան Եվրոպայում»[3]։

Այսպիսով, իր աշխատություններից մեկում IX—X, իսկ մյուսում X—XI դարերը ակադ. Հ. Մանանդյանը համարեց այն ժամանակաշրջանը, երբ Հայաստանում քայքայվում էին ֆեոդալական արտադրական հարաբերությունները և ստեղծավորվում, Արևմտյան Եվրոպայից հինգ դար առաջ, բուրժուական հարաբերություններ։

Մեզ հետաքրքրող հարցերին թեթևակիորեն անդրադարձավ նաև ակադ. Ն. Մառը Անիի պեղումների արդյունքների մասին գրած իր հոդվածներում և նրանց ամփոփումը հանդիսացող «Անի» մեծարժեք աշխատության մեջ (տպ. 1934 թ.)։

Տարբերվելով նախորդ հեղինակներից, որոնք ֆեոդալիզմի քայքայման ու կապիտալիստական հարաբերությունների ստեղծավորման մասին խոսում էին նկատի ունենալով միայն սելջուկյան արշավանքներին նախորդող ժամանակաշրջանը՝ ակադ. Ն. Մառը իրավամբ կարծում էր, որ այդ արշավանքները չկանխեցին երկար ժամանակով արտադրողական ուժերի զարգացումը Հայաս-

---

[1] Ուշադրավ է, որ աշխատության 2-րդ հրատարակության մեջ ակադ. Հ. Մանանդյանը փոխել է «ազգային բուրժուազիայի» („национальной буржуазии“) արտահայտությունը՝ «առևտրա-վաշխառուական տարրի» („торгово-ростовщический элемент“) արտահայտությամբ։

[2] *Я. А. Манандян.* О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ереван, 1930. стр. 149 (первое издание), стр. 212 (второе издание).

[3] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 46—47։

տանում. քաղաքների ծագման ու ընդարձակման, արհեստագործության և առևտրի զարգացման տեսակետից Հայաստանի տնտեսության համար ավելի մեծ նշանակություն ունեցան հաջորդ՝ XII—XIII դարերը։

Խոսելով Անիի նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցի մասին, նրան համարելով «իր էպոխայի համար տիպական կապիտալիստ», նշելով այն փաստը, որ Տիգրանը «զբաղվում էր փոխատվական գործարքներով գրավի դիմաց և նրա մոտ գրավի տակ էին գտնվում բազմաթիվ հողեր և կալվածքներ», Ն. Մարը ի վերջո եզրակացրեց, որ «այս բոլորը ստիպում է հանգել այն մտքին, որ Անին հենց այն հնոցն էր, որի մեջ հայկական ֆեոդալիզմը վերափոխվեց... հայկական բուրժուական աշխարհիս»[1]։

Հաջորդ հեղինակը, որը շատ ավելի հանգամանորեն անդրադարձավ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հասարակական ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների հարցերին, հիմնավորելու համար «հայկական վերածնության» իր տեսությունը՝ ականավոր գիտնական Մ. Աբեղյանն էր։ Իր «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» հոդվածում (տպ. 1943 թ.) և մասնավորապես «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ գրքի առաջին գլխում (տպ. 1946 թ.) Մ. Աբեղյանը այսպես է բնորոշում Հայաստանի տնտեսական զարգացման աստիճանը X—XI դարերում. «Երկարատև խաղաղ շինարարության դարաշրջանում... արագ բարձրանում է ժողովրդական տնտեսությունը, երկրի բնակչությունն աճում է, շինվում են բազմաթիվ գյուղեր, քաղաքագյուղեր ու գյուղաքաղաքներ, որոնք հետզհետե դառնում են ավելի ու ավելի մարդաշատ, առաջանում են խոշոր քաղաքներ։ «...Ոչ միայն Անիի, այլև Կարսի, Արծնի և ուրիշ քաղաքների վրայով էին անցնում տարանցիկ առևտրական մեծ ճանապարհի ճյուղերը. ուստի և նրանք ևս դարձել են վաճառաշահ կենտրոններ և ներքին, և արտաքին առևտրի, և ապրանքների փոխանակության համար։ ...Բնականաբար առաջ էր գալիս դրամական տնտեսությունը. դրամը մի նոր առտված էր դարձել, մարդիկ ամեն տեսակ շահի ետևից էին ընկնում...։ X դարից արդեն նյութական կարողությունը—ոսկին, երկրի հարստությունները, կալվածներ և ուրիշ անշարժ կալքեր, կենտրոնանում էին առանձին վաճառական անհատների ձեռին. առաջ էին գալիս կապիտալիստներ, որոնք կազմում էին մի նոր դասակարգ»։

«Այսպիսով, ֆեոդալական շրջանի երկու իշխող դասերի՝ ազնվականության և եկեղեցականության կողքին տնտեսապես, ապա և մասավորապես բարձրանում և դիրք էր ձեռք բերում նոր դասակարգը—հարուստ քաղաքացիությունը, որ նույնիսկ մրցում էր ֆեոդալների հետ և այլն»[2]։

Մ. Աբեղյանի տեսակետը «հայկական վերածնության» և նրա սոցիալ-տնտեսական նախադրյալների մասին ձգողական մեծ ուժ ուներ և կարճ ժամանակում լայն տարածում գտավ։ Մասնակի լրացումներով կամ, ավելի հաճախ, առանց որևէ վերապահման՝ այդ տեսակետն ընդունվեց հայ միջնադարյան կուլտուրայի պատմության այլևայլ բնագավառներն ուսումնասիրող մի շարք մասնագետների կողմից, այն տեղ գտավ նույնիսկ միջնակարգ դպրոցների համար կազմված գրականության պատմության դասագրքում[3]։

---

[1] *Н. Я. Марр.* Ани. 1934, стр. 35.

[2] Մ. Աբեղյան. Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 4—6։

[3] «Հայկական վերածնության» այս տեսությունն բնակլոգներից իրենց ջանասիրությամբ աչքի են ընկնում հատկապես Վ. Զալոյանը. տե՛ս նրա „Роль восточных наро-

Սովետական պատմագրությունը, բնականաբար, լռելյայն չէր կարող անցնել Հայաստանի, ինչպես նաև մեր հարևան Վրաստանի մի խումբ գիտնականների կողմից առաջ քաշվող «Արևելյան (կամ հայկական) վերածնության» նոր ու հետաքրքրական պրոբլեմի կողքով։ Եվ «Սովետական մեծ հանրագիտարանի» 2-րդ հրատարակության խմբագրությունը անհրաժեշտ դտավ «Վերածնություն» („Возрождение") բառի տակ անդրադառնալ այդ պրոբլեմին, նշելով, որ այն «առայժմ բավարար չափով չի լուսաբանված։ Ամեն դեպքում նրա դրական լուծման համար անհրաժեշտ է հաստատել ոչ միայն կուլտուրայի ծաղկման, անտիկ կուլտուրայի նկատմամբ հետաքրքրության առաջացման փաստը և այլն, այլ, ամենից առաջ, այդ շրջանում Արևելյան երկրներում կապիտալիզմի սաղմնավորման հատկանիշների առկայության փաստը»[1]։

Ֆեոդալիզմի քայքայման ու կապիտալիստական հարաբերությունների սաղմերի առաջացման մասին, ինչպես տեսանք վերոհիշյալ հայագետների մտքերի ու տեսակետների հակիրճ շարադրանքից, հայտարարություններ շատ են եղել, սակայն նրանցից և ոչ մեկը չի փորձել հատուկ ուսումնասիրությամբ անդրադառնալ այդ հարցերին սկզբնաղբյուրների ընձեռած տվյալների ըստ կարելվույն ամբողջական և անկողմնակալ օգտագործումով։

Այդ աշխատանքը մասամբ կատարել է ականավոր հայագետ Աշ. Հովհաննիսյանը, «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» մեծարժեք աշխատության առաջին հատորում (Երևան, 1957)։ Այստեղ, այլևայլ առիթներով անդրադառնալով Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների հարցերին, նա իր խոսքն է ասել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի մասին, բնորոշելով այն որպես զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջան։ Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում աշխատության այն դրվագները, որոնք նվիրված են X—XVI դարերի դրեթե բոլոր նշանավոր քաղաքական ու կուլտուրական գործիչների դաղափարական դիմապատկերմանը։ Առանց բանավեճի մտնելու «հայկական վերածնության» ջատագովների հետ, Աշ. Հովհաննիսյանը, փաստական ուշագրավ նյութերի օգտագործումով և մարքսիստ պատմաբանի կուռ տրամաբանությամբ բացահայտել է նրանց տեսակետների սնանկությունը։ Գարևոր ու գնահատելի աշխատանք է կատարել նաև Բ. Առաքելյանը «Հայաստանի քաղաքները 10—13-րդ դարերում» տպագրության հանձնված մենագրության մեջ։

Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը հիշյալ դարերում գիտականորեն որոշելու համար մեր կարծիքով անհրաժեշտ է, ձեռագիր ու տպագիր աղբյուրների մանրակրկիտ հետախուզությամբ, երևան բերել ու արժևքավորել բոլոր այն նյութերը, որոնք, այս կամ այն չափով, կարող են նպաստել մեր պատմագրության մեջ իրենց լուծումը չստացած մի շարք խիստ կարևոր հարցերի պարզաբանման գործին։

дов в истории развития философской мысли" „Основные вехи, развития философской мысли в Армении (V—XVIII вв.)", «Հայկական վերածնության մասին» («Տեղեկագիր», 1955, № 12, էջ 85—114) և այլ հոդվածները, և Մ. Մկրյանը—տե՛ս նրա «Գրիգոր Նարեկացի» (Երևան, 1955) ուսումնասիրությունը և «Հայ գրականության պատմության» 3 հրատարակությամբ (1949, 1951 և 1954) լույս տեսած դասագրքի առաջին հատորի համար գրած գլուխները։

[1] Տե՛ս „Большая Советская энциклопедия", второе издание, т. 8, стр. 534 (ընդգծումը մերն է.—Լ. Խ.)։

Սույն հոդվածով ի մի ենք բերում X—XIV դարերի արհեստագործության վիճակի ու զարգացման աստիճանի մասին մեր ձեռքի տակ եղած նյութերը, ծրագրելով առաջիկայում հոդվածներ գրել նաև հետևյալ հարցերի մասին՝ 1) Հայ մեծատունները և նրանց գործունեության բնագավառները, 2) Վարձկանները ու ծառաները հայկական քաղաքներում ու գյուղերում, 3) Գյուղական համայնքը X—XIV դարերում և այլն։

* * *

Կ. Մարքսը «Կապիտալի» առաջին հատորում գրում է. «Թեև կապիտալիստական արտադրության առաջին սաղմերը սպորադիկ կերպով հանդիպում են արդեն XIV ու XV դարերում Միջերկրական ծովի առանձին քաղաքներում, բայց և այնպես կապիտալիստական դարաշրջանն սկսվում է միայն 16-րդ դարից։ Այնտեղ, որտեղ սկսվում է նա, վաղուց արդեն ոչնչացել է ճորտատիրությունը, և արդեն զգալիորեն թոշնել է միջնադարի ամենավառ ծաղիկը — ազատ քաղաքները»[1]։

Արդ, որոնք էին արտադրական այն հարաբերությունները, որոնց հիման վրա Մարքսը գտնում էր, որ XIV—XV դարերում հենց Իտալիայումն էր «կապիտալիստական արտադրությունն ամենից վաղ զարգացել»։

Սովետական պատմագրությունը զգալի նվաճումներ ունի միջնադարյան Եվրոպայի քաղաքների արտադրական կյանքի ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման բնագավառում։ Մասնավորապես կարևոր են Վ. Ռուտենբուրգի աշխատությունները, նվիրված իտալական քաղաքներում կապիտալիստական արտադրական հարաբերությունների ստգնավորման հարցերին[3]։

Փաստական հարուստ նյութերի հիման վրա Վ. Ռուտենբուրգը վերականգնել է իտալական ամենախոշոր քաղաքներից մեկի՝ Ֆլորենցիայի արդյունաբերական ու առևտրական պատկերը, ցույց տալով, որ XIV դարում քաղաքի տնտեսական կյանքում առաջնակարգ դեր էին կատարում արդյունաբերական կոմպանիաները. իրենց կապիտալները զգալի չափով մահուդագործական ձեռնարկությունների մեջ էին ներդրել նաև առևտրական ու բանկային կոմպանիաները։

«Երդի մշակման մասին արտատարք» (XIV դար) և այլ նյութեր հնարավորություն են տվել հեղինակին ուշագրավ մանրամասնություններով պատկերելու մանուֆակտուրային տիպի կապիտալիստական ձեռնարկության կառուցվածքն ու բնույթը։ Ըստ այդմ բրդի հումքը Ֆլորենցիա էր ներմուծվում Անգլիայից, Ֆրանսիայից, Թունիսից, Իսպանիայից, Հունաստանից և Լևանտյան երկրներից, իսկ պատրաստի արտադրանքը արտահանվում նույն և մի շարք այլ երկրներ։ Ներմուծվող հումքը տեղ հասնելով ստուգվում ու գնահատվում էր հատուկ մասնագետների-գնահատու հսկիչների կողմից. այլ մաս-

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, Ա. հատոր, Երևան, 1951, էջ 718։

[2] Նույն տեղում, էջ 749, ծան. 189։

[3] Տե՛ս В. И. Рутенбург, Очерк из истории раннего капитализма в Италии. М.—Л., 1951, և Налогообложение и общественный кредит Флоренции XII—XV вв., Л., 1941, աշխատությունները։

նադեանները անսակավորում էին հումքը ըստ որակի, ապա ուղարկում նախնական մշակման՝ ճարպից, քրտինքից և կեղտից մաքրելու համար։ Դաթնաներում եռացնելուց, Արնո գետում լվանալուց և արևի տակ չորացնելուց հետո՝ բուրդն ուղարկվում էր կենտրոնական արհեստանոց, որտեղ աշխատում էին բացառապես վարձու բանվորներ (XIV դարում Ֆլորենցիայում կար 30,000 վարձու բանվոր)։ «Այսպես արդեն,—գրում է Վ. Ռուսենբուրգը,—չկան տրվյալ արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները կատարող վարպետներ, ենթավարպետներ կամ աշակերտներ։ Արտադրության բարդ ու լայնորեն դիֆերենցված պրոցեսը հանգեցնում է կամպանիայի կենտրոնական արհեստանոցի ներսում աշխատանքի նույնպիսի լայն բաժանման, ստեղծում է բանվորների մի ամբողջ բանակ, որոնցից յուրաքանչյուրը ձեռք է բերում շատ նեղ բնագավառի, հաճախ ամբողջ պրոցեսի միայն մեկ առանձին գործողության փորձ։ Այդ բանվորը դադարում է ունիվերսալ լինելուց. նա արագորեն ու հմուտ կերպով կատարում է տարեց-տարի կրկնվող մեկ գործողություն։ Չհաշված ներկելու պրոցեսը, բուրդը, ինչպես և մահուդի տարբեր կիսաֆաբրիկատները կամպանիայի արհեստանոցում անցնում են ավելի քան 20—25 առանձին գործողություններով»[1]։

Եվ այսպես, մշակվող բուրդը մի քանի անգամ դուրս էր գալիս կենտրոնական արհեստանոցից, տարվում Ֆլորենցիայում և շրջակա գյուղերում բնակվող չքավոր կանանց մոտ մանվելու, ապա ներկվելու համար։ Այնուհետև կրկին բերվում էր կենտրոնական արհեստանոց և, ի վերջո, պատրաստի արտադրանքը մեծ հակերով արտահանվում էր հեռավոր երկրներ։

Անհրաժեշտ է նշել նաև, որ արդյունաբերական կամպանիաները իրենց էին ենթարկել Ֆլորենցիայի բոլոր անալնագործներին։ Թուլլ ու ադքատ համքարությունների շատերը ևս քարշ էին տալիս իրենց գոյությունը արդյունաբերողներին սպասարկելով և նրանց կողմից վարձվելով։ Այդ համքարությունների ընդգրկված արհեստավորների վիճակը քիչ բանով էր տարբերվում կենտրոնական արհեստանոցներում աշխատող բանվորների վիճակից։ Այսպիսով, համաշխարհային շուկաներում հռչակված Ֆլորենտյան մահուդը XIV—XV դարերում մեծ չափով արտադրվում էր կապիտալիստական տիպի արդյունաբերական ձեռնարկություններում։ Արտադրական այսպիսի հարաբերություններ, այս կամ այն չափով, գոյություն ունեին նաև իտալական մի շարք այլ քաղաքներում և, անտարակույս «կապիտալիստական արտադրության առաջին սաղմեր» ասելով Մարքսն ի նկատի ուներ հենց այս կարգի հարաբերությունները։

Արդ, եղել են արդյոք այդպիսի հարաբերություններ Հայաստանում X—XIV դարերում։

Աշխատենք պատասխանել այս հարցին մատենագրական, մեծ մասամբ ձեռագիր ու անտիպ, փաստերի օգնությամբ։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, հատկապես XII—XIII դարերում, Հայաստանում արհեստագործության մի շարք ճյուղեր, որոնց արտադրանքը հանվում էր երկրից դուրս՝ աննախընթաց զարգացում էին ապրել։ Արտահանվող ապրանքների մեջ զգալի տեղ էին բռնում զանազան թանկարժեք

[1] *В. И. Рутенбург*, Очерк из истории раннего капитализма в Италии, стр. 134—135.

գործվածքները, գորգերը, մետաղյա իրերը, ներկերը և այլն։ Հայտնի է, օրինակ, որ Երզնկայի ճարտար մանածագործները XIII—XIV դարերում հյուսում էին «աշխարհի լավագույն բեհեզները» (Մարկո-Պոլո)[1] և «իր անունով, կոչվող գեղեցիկ կերպասները» (Յակուտ[2] և Իբն-ի Բատուտա[3])։ Ժամանակակիցների վկայությամբ Երզնկայում արտադրված պղնձե ամանները և, մանավանդ, զարդարուն աշտանակները մեծ հռչակ էին վայելում (Իբն-ի Բատուտա[4])։ Երզնկան, Հայաստանի մի շարք այլ քաղաքների հետ միասին, հայտնի էր նաև բարձրարվեստ իր ոսկերիչներով ու արծաթագործներով։

Արհեստագործության զարգացումը հիմնականում ընթանում էր ոչ թե գործիքների կատարելագործման ուղիով, այլ առաջին հերթին, աշխատանքի բաժանման հետագա խորացմամբ։ Արհեստի որոշ ընագավառներ կատարելագործվելով բաժանվում էին ենթաճյուղերի, առաջ էին գալիս արհեստագործական նոր մասնագիտություններ։ Գրիգոր Մագիստրոսը «Ծա տէր Պետրոս» գրած Ր. թղթում, իրեն հատուկ դիպուկ արտահայտություններով, խոսում է հյուսնության, ոսկեգործության, երկաթագործության և պղնձագործության մայր արհեստների՝ մի շարք ենթաճյուղերի բաժանված լինելու մասին։ Նա գրում է. «...Ըստ օրէն հիւսանց, որք արհեստին են մակացուք, ոչ նախուստ յանտառս կամ ի մայրս ճեպին հատանել փայս, քանզի այլ ոք են պարապեալ այնոցիկ, և այլ, որք հարթեն և սղոցեն, և ապա ծայրագոյնքն՝ ճախարակք և այլովք գործարանօք գեղապանծ ղնոսա յարդարեն գահաւորակս և աթոռս և այլ ինչ գործարանս։ Այսպէս և որք ոսկւոյն են պարապեալք և երկաթոյ և պղնձոյ»։

Նմանօրինակ տվյալ ունենք նաև թանկարժեք գործվածքների արտադրության մասին. ոսկեհուռ ասեղնագործ կերպասե կտորները արտադրվում էին արդեն տարբեր մասնագետների միահամուռ ջանքերով XIV դարի վերջերին և XV դարի սկզբներին ապրած մատենագիր Մատթեոս Ջուղայեցին մի առիթով գրել է այսպիսի տողեր. «Զորօրինակ գործէ ոք կերպաս ի յապերշմէ, և ապա լեռոյ զարդարեն զնա ոսկի թելովք»։

Ուշագրավ է նաև նույն հեղինակի հաղորդած տվյալը քիմիա և նաշիթանկարժեք գործվածքների արտադրման բարդ պրոցեսի մասին, որի հետ նույնպես արժե ծանոթանալ. «Զորօրինակ,—գրում է Ս. Ջուղայեցին,—թէ ոք քիմիայ կամ նաշիճ գործել ուսանի. և յայնմանէ զկտաւն և զբուրթն հնաճրեն գործել, որք են այլ մանրուսմունք։ Եւ թէ Ը՞ր է դժուար, ասիցէ ոք սահն և նաշիճն։ Զի զվարազ ոսկին ի վերայ մորթոյ կացնեն և մանր թել կտրեն և այնպես հնարեն ի գործելն, որ այն բարակ թելին ոսկին երևսն ի վեր լինի. և վասն այսորիկ դժուար է այս գործ քան զամենայն ինչ»[7]։

---

[1] Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, I, 1932, էջ 48։

[2] Յակուտի աշխարհագրության հետ ծանոթացել ենք հետևյալ արարագետ Հ. Նալբանդյանի կատարած թարգմանությամբ, որի տպագրությունը, չգիտես ինչու, շարունակ ձգձգվում է։

[3] Օտար աղբյուրները հայերի մասին։ Իբն-ի Բատուտա (1301—1378), բաղեց և թարգմանեց Հ. Անասյան, Երևան, 1940, էջ 31։

[4] Նույն տեղում։

[5] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ադերսանդրապոլ, 1910, էջ 9։

[6] «Հնութիւն գործոց առաքելոց», Պետ. Մատենադարան, ձեռ. № 1102, էջ 187ա։

[7] Նույն տեղում, էջ 19ա։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, անտարակույս, եղել է արհեստագործական որոշ գործիքների կատարելագործում, ինչպես նաև տեխնիկական նորարարություններ։

Պրոֆ. Ր. Առաքելյանը, օրինակ, ուշադրություն է դարձրել Վարդան Անեցու (X դար) «Վասն կառացն աստուածութեանն» չափածո բարձրարվեստ գրվածքի մի հատվածի վրա, որի մեջ ակնարկ կա ինչ-որ լարով աշխատող բրուտագործական ճախարակի մասին («զհամատարած լարն վիճակի, որով շարժէ զճախարակ բրտի»)[1]։ Ճիշտ է, բանաստեղծական այս արտահայտության հիման վրա դժվար է պատկերացնել ճախարակի կառույցվածքը, սակայն կարելի է չկասկածել, որ այն ավելի կատարելագործված դազգահ է եղել, քան ոտքերի օգնությամբ դարձող դուրը։

Ուշադրավ ձեռագրական վկայություն ունենք այն մասին, որ կատարելագործվել է նաև ոստայնանկի դազգահը։ Գետնագործ կամ ստվինիգործ կոչվող դազգահի կոդքին, որի վրա ոստայնանկը գործում էր միայն ձեռքերի օգնությամբ, պրակտիկայի մեջ է մտնում ու լայն տարածում գտնում արդեն հորագործ կոչվող դազգահը, որի վրա աշխատում էին և՛ ձեռքերով, և՛ ոտքերով։ Մեր արդեն ծանոթ Մատթեոս Ջուղայեցին, նկարագրելով ոստայնանկի աշխատանքը, գրում է. «Յորժամ ոստան հենէ, նախ չափէ զմի թելն և ապա հենէ. և ի գործելն՝ ոտիւքն և ձեռօքն վճարէ, և զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սալնին»[2]։

Տեխնիկական որոշ առաջադիմություն, ըստ երևույթին, եղել է նաև մետադամշակության մեջ։ Հայ արհեստավորները կարողացել են ստեղծել ձուլածո բարդ, տարբեր մասերից կազմված, արձանիկներ։ Ալքիմիական մի ձեռագրում կարդում ենք այսպիսի տողեր. «Եւ կարմիր պղինձ, հայէ զինքն և լից մարդոյ պատկեր, որ առիւծ է հեծէր. վերայ գլխուն՝ թագ, և ունի Ր. եղջիւր, և իւր ձախ ձեռն խօսող, և հալաւն ամէն՝ երկաթիւ»։ Արձանագործական այս բարդ կոմպլեքսը մի կաղապարով շատ դժվար կլիներ ձուլել։ Այդ է նկատի ունեցել հեղինակը, խրատի շարունակության մեջ գրելով. «Թէ ամէնս մէկ տեղ չէ կարէս հանել, դու հան զառիւծն, զմարդն և զխօսողն... խարտէ, որ աղէկ պատկեր ելանէ, և ծածկե զմարդն յերկու անդամն, որ մտանէ առիւծին փորն, և գամ զարկ յինքն երկաթի կամ պղնձի»[3]։

Ալքիմիական մի այլ ձեռագրում, որն ընդօրինակված է XVII դարում բայց գրված պետք է լինի դարեր առաջ, գտնում ենք պղնձի օքսիդ (ժանգաո) ստանալու մի խրատ, որի մեջ, ի միջի այլոց, ասված է. «Առ պղնձի քերուքն, զայն որ չարխէն վաթիւ» և այլն[4]։

Արանից կարելի է թեև եզրակացնել, որ գոյություն է ունեցել անիվավոր հատուկ հարմարանք, մետաղներ, տվյալ դեպքում պղինձ մշակելու համար։ Մետադամշակման պատմության մասնագետ չլինելով դժվարանում ենք ասել, թե այդպիսի հարմարանք առաջին անգամ երբ և որտեղ է ստեղծվել։ Այնուամենայնիվ, նրա առկայությունը Հայաստանում ինքնին վկայում է մետադամշակման բնագավառում ևս համեմատաբար ավելի կատարելագործու-

---

1 «Բազմավէպ», 1919, էջ 164—169։
2 «Քննութիւն գործոց առաքելոց», Պետ. Մատենադարան, ձեռ. № 1402, էջ 64։
3 Պետ. Մատենադարան, ձեռ. № 2954, էջ 178։
4 Պետ. Մատենադարան, ձեռ. № 7322, էջ 37։

թյան հասած գործիքների կիրառման մասին։ Անհրաժեշտ է կրկնել, սակայն, որ նոր մասնաճյուղերի էին բաժանվում և տեխնիկական այս կամ այն չափով առաջադիմում միայն այն արհեստները, որոնց արտադրանքի զգալի մասն արտահանվում էր երկրից դուրս։ Եվ ընդհակառակը, արհեստագործության ամենամասսայական բնագավառները, որոնց արտադրանքը տեղական շուկայից դուրս չէր գալիս, շարունակում էին իրենց գոյությունը պապենական հնամենի ձևերով ու տեխնիկական միջոցներով։

Բերենք մի բնորոշ օրինակ. մորթիներից վերարկու և գլխարկ պատրաստող արհեստավորը—ճոնը՝ կենդանուն մորթագերծ անելուց սկսած մինչև հանդերձ կարելը՝ կատարում էր ինքը միայնակ։ Այս մասին ևս պերճախոս տվյալ է հաղորդում բանիմաց Մատթեոս Ջուղայեցին. «Ճոնն հանէ զայլ կենդանեաց մորթ, և ազէ, և չորացուցանէ, և գարձեալ լուանայ, և հանէ զմիսն, և զնէ յաղոց՝ զարէ ալերբ, և խմորով, և հանեալ՝ գարձեալ չորացուցանէ, և ապա գործէ և կակղէ, և յետոյ ներկէ, և ի բազում մորթոյ մի հանդերձ կարէ»[1]։

Այսպիսով, բերված փաստերը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ X—XIV դարերում Հայաստանում արհեստագործությունը ընդհանուր առմամբ և, հատկապես իրենց արտադրանքով արտաքին շուկայի հետ կապված արհեստի ճյուղերը՝ զարգացում էին ապրում։ Մաս արհեստի մասնատումով ստեղծվում էին արհեստագործական նոր մասնաճյուղեր, ուստի և նոր մասնագիտություններ։ Ներքին շուկայի սահմանափակ պահանջները բավարարող արհեստները բանում էին հնավանդ ու պրիմիտիվ տեխնիկական միջոցներով, այն դեպքում երբ արհեստագործական մյուս ճյուղերում նկատվում են տեխնիկական որոշ նորարարություններ ու գործիքների կատարելագործման երևույթներ։

Այժմ աշխատենք սկզբնաղբյուրների ընձեռած սուղ ու պատահական տեղեկությունների ի մի բերումով հնարավորին չափ պարզաբանել թե ինչ սկզբունքներով էր կազմակերպված արհեստագործությունը Հայաստանում X—XIV դարերում, որքանով էր խորացել արհեստի բաժանումը գյուղատնտեսությունից, կային արդյոք Հայաստանի քաղաքներում արհեստագործական համքարություններ և այլն։

Անիի և Դվինի պեղումների ընթացքում հայտնաբերված երկրագործական գործիքները (արորներ, խոփեր, գերանդիներ, կալսելու կամներ, բահեր և այլն) վկայում են այն մասին, որ հայկական միջնադարյան քաղաքների բնակչության համար երկրագործությունը, որպես օժանդակ զբաղմունք, որոշակի դեր է կատարել[2]։ Եվ ընդհակառակը, գյուղերում ու ավաններում գյուղատնտեսությունից զատ զբաղվել են նաև արհեստագործությամբ, եղել են դարբիններ, հյուսներ, դերձակներ և այլ արհեստի տեր մարդիկ, որոնք բավարարել են իրենց համագյուղացիների ոչ բարդ, ամենօրյա պահանջները[3]։ Ավելին, տվյալներ ունենք այն մասին, որ գյուղական անտեսությունները

---

[1] «Քննութիւն գործոց առաքելոց», Պետ. Մատենադարան, ձեռ. № 1402, էջ 189բ—190ա։

[2] Տե՛ս Հ. Օրբելի, Անվա ավերակները, Վաղարշապատ, 1919, էջ 51, Կ. Դաֆիսանյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 150։

[3] Այս մասին ուշագրավ նյութեր կան հայերեն ձեռագրերի հիշատակարաններում։

գերազանցապես փակ նատուրալ բնույթ կրելով, աննշան չափերով էին կապված շուկայի հետ և բավարարում էին իրենց սուղ պահանջները՝ ինքնուրույն։

Այս մասին ուշագրավ տեղեկություն ենք գտնում Գրիգոր Տաթևացու «Համառոտ հաւաքումն առակաց գրոցն Սողոմոնի» ձեռագիր աշխատության մի հատվածում, որը կրում է «Վասն գովության ժրագույն կնոջ» խորագիրը։

Ավելորդաբանություններով լի այդ հատվածից քաղվածաբար մեջ բերենք որոշակի հետաքրքրություն ներկայացնող մի-երկու տող.

«Այլ և ինքն (ժրագույն կինն) աշխատի և գործէ ձեռաւքն՝ մանէ կամ ոստայնէ...Ոչ միայն ի ցերեկի գործէ, այլ և ի գիշերի... գտեալ սար և կտաւ՝ արար հանդերձս պիտանիս և վաճառեաց... Զի և պատրաստէ հանդերձս իւր և առն իւրում և ամենայն ընտանեաց, և ոչ կարօտին յարտաքուստ գնելոյ»։

Շարունակության մեջ Տաթևացին հայտնում է նաև, որ «սեպհական գործ կնոջ մանելն է և ներկելն»[1]։

Այսպիսով, պարզ է դառնում, որ սովորական ու պարզ գյուղական հագուստ ձեռք բերելու համար «ժրագույն» կին ունեցող գյուղացին, հարկ չուներ դիմելու ջուլհակի կամ ոստայնանկի։

Անաարակույս, ապահով և ունևոր գյուղական տանուտերը, չբավարարվելով տանը պատրաստված կոպիտ հագուստ-կապուստով, անձամբ կամ միջնորդ առևտրականի միջոցով կապվում էր քաղաքային շուկաների հետ, ձեռք բերելով թանկարժեք կտորներ ու գործվածքներ։ Այդպիսիներից էր անշուշտ միջնադարյան ժողովրդական առակներից մեկի հերոսը, որը նույնիսկ պատարագի ժամանակ՝ մտքով զբաղվում ու առևտուր էր անում խոշոր քաղաքների ճոխ շուկաներում. «Միտքս ի Թավրէժ էր և քո մաւրն գլխագիր և կաւշիկ կու գնէիս—ասում է նա իր երկյուղած որդուն, որը պատարագի ժամանակ, իբր, ականջում էր հրեշտակներ»։

Պետք է ենթադրել, որ ֆեոդալական ու վանական խոշոր տնտեսությունները ևս իրենց անհրաժեշտ արհեստագործական արտադրանքի մի մասը ձեռք էին բերում ոչ թե քաղաքային շուկաներից, այլ պատրաստում գրչյակներին ու վանքերին կից գոյություն ունեցող արհեստանոցներում։

Խոշոր վանքերի արհեստանոցների մասին կարևոր են Ստ. Օրբելյանի հաղորդած տվյալները։ Խոսելով Տաթևի վանքի շինության առանձին էտապների մասին, պատմիչը գրում է, որ այնտեղ կառուցվել են «զդպրատանոցս գեղանփորս ի ներքո վանիցն՝ ծածուկ երկրաւ, բաղում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն... և սրբաշէն տրապէզս և զործատեղս համբարանոցս և սրբարանս և գրատունս», կամ «շինէ (թագուհին Սիւնեաց Շահանդուխտ) և... զհամբարանոցս և զործատունս և շուրջ պարսպէ զվանքն»[3]։

Այս վկայություններում խոսք չկա այն մասին, թե վանական գործատներում ովքեր էին աշխատում, սակայն մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ այդ արհեստավորների գեթ մի մասը հոգևորական է եղել։ Այդպես էր, օրինակ, հարևան Վրաստանում[4] և, ինչպես կարելի է եզրակացնել

---

1 Պետ. Մատենադարան, ձեռ. № 1264, էջ 367ա։

2 Պետ. Մատենադարան, ձեռ. № 3179 էջ 127ա։

3 Ստեփանոս Օրբելիան, Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 225։

4 Տե՛ս Շոթա Մեսխիայի «X-XII դդ. վրացական վանքերում արհեստագործության և աշխատանքի կազմակերպման հարցի շուրջը» հոդվածը (վրացերեն), տպագրված Վրացական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի «Միմոմխիլվելի» ժողովածուի մեջ (1949, 1)։

Հակոբ Կլայեցի կաթողիկոսի (1268—1286) «Մեկնութիւն նուրբ գրեանց» անտիպ աշխատության տվյալների հիման վրա՝ նաև Հայաստանում։ Կլայեցին իր աշխատության էջերից մեկում գրում է. «Յատուկ ամենայն վանաց ամենայն եղբարց արուեստ որոշել չէ պարտ. վասն դի ոմն վանուց այս ինչ պիտո է և ոմն՝ այս ինչ. և է արուեստաւոր մի վանիցն չգա ի պէտք վասն նիւթոցն անպատրաստութեան և դժուարագիւտ լինել(ոյ), բայց այլում տեղոջ՝ նիւթն առատ և պիտանի եղբարցն և դիւրավաճառ։ Շարունակության մեջ կաթողիկոսը պահանջում է կղերական-արհեստավորներից չզբաղվել պերճանքի իրերի, ոսկեկար գործվածքների և այլ թանկարժեք ապրանքների արհեստագործությամբ. «Իպակագործութիւն, ոսկեգործութիւն, — գրում է նա, այսպիսիքս ցանկութեանց մարդիկ սպասաւորք են, դի ոմն թագ ցանգայ ունել և խնդրէ առնել յարուեստաւորէն, ոմն փողնոց, ոմն ծղանոց, այլ ոմն այլ ինչ. և նա (արուեստաւորն) լնու զցանկութիւնսն, այպէս և դիպակագործն... զոր չէ պարտ կրօնաւորացն ուսանել». Նա խրատում է բավարարվել «այծէիւք ոստայնանկութեամբ» և «լոկ և թանձր» (իմա պարզ ու անզարդ) կոշիկներ կարելով[1]։

Շատ ավելի սակավ են մեր տեղեկությունները ֆեոդալական դղյակներին կից եղած գործատների մասին։ Հիմք կա ենթադրելու, որ նրանցում, ճիշտ այնպես, ինչպես մոնղոլական իլխանության ժամանակաշրջանի «քարխանե»—գործատներում[2], բանում էին ստրուկ արհեստավորներ, որոնց գոյությունը Հայաստանում թերևս հավաստվում է Գրիգոր Տաթևացու քարոզներից մեկով։ Տաթևացին, դիմելով Հուդային, ասում է «ո՞վ թշուառական, գծառայ մի որ ոչինչ գիտէ ի հարիւր դահեկան ծախեն, դու զվարդապետն և զարարողն երկնի և երկրի՝ վասն երեսուն արծաթի՞»[3]։ Պետք է ենթադրել ուրեմն, որ վաճառում էին նաև այնպիսի ծառաների, որոնք բան (իմա արհեստ) գիտեին։

---

[1] Պետ. Մատենադարան, ձեռ. № 598, էջ 175բ։

[2] Այդ «քարխանաներում», որ պատկանում էին իլխաններին ու թագաժառանգներին, արտադրում էին զենք ու զինամթերք, հագուստ, ինչպես նաև ապակի ու հայելի։ Այդ մասին տե՛ս А. М. Белицкий, К вопросу о социальных отношениях в Иране в хулагуидсую эпоху („Советское востоковедение", V, стр. 123—124).

Ա. Բելենիցկին հենվելով պարսկալեզու աղբյուրների վրա կարծում է, որ առաջին «քարխանաները» ստեղծվել են Միջին Ասիայում XIII դարի 30-ական թվականներին (տե՛ս նույն տեղ)։ Ներսես Շնորհալու (մահ. 1173 թ.) հանելուկներից մեկում, կարծում ենք, կա ակնարկ այն մասին, որ այդպիսի գործատներ արևելքում եղել են մինչմոնղոլական շրջանում ևս։ Սարդի մասին գրած Շնորհալու հանելուկում ասված է.

«Ի սուլտանի մեծ քարխանան
Կայր մին ուսթայ խիստ աննման,
Առանց հորի և մաքորան
Գործեր բարակ գործ անխափան»
(«Տաղարան», 1512 թ., էջ 52—53)։

«Սուլթանի քարխանա» ասելով հեղինակը նկատի է ունեցել, մեծ հավանականությամբ, սելջուկյան սուլթանի գործատունը, ուստի և այդպիսի գործատներ գոյություն են ունեցել նաև XII դարում։

[3] Գր. Տաթևացի. Գիրք քարոզութեան, որ կոչի ձմռան հատոր, Կոստանդնուպոլիս, 1740, էջ 581։

Պատմական սկզբնաղբյուրները, բարեբախտաբար, փոքր ինչ առատ են մեզ հետաքրքրող հարցերի տեսակետից անհամեմատ ավելի մեծ նշանակություն ունեցող քաղաքային արհեստագործության այլևայլ կողմերը լուսաբանող նյութերով։ Եվ դա միանգամայն բնական է, եթե նկատի առնենք քաղաքային արհեստագործության տեսակարար կշռի ծանրությունը։

Արհեստները միջնադարյան Հայաստանի քաղաքներում, անտարակույս, կազմակերպված են եղել համքարական սկզբունքներով։

Համքարությունների գոյությունը Հայաստանում X – XIV և հետագա դարերում այժմ արդեն հավաստվում է նշանակալից փաստերով։ Որանք մասամբ օգտագործված են Յու. Ախվերդովի, Ա. Եղիազարովի, Վ. Աբրահամյանի և ուրիշների Հայաստանի արհեստագործության ու համքարական կազմակերպության պատմությանը նվիրված տպագիր աշխատություններում[1]։ Որոշ նոր տվյալներ, հատկապես Երզնկայում 1280 թ. ստեղծված առևտրական ու արհեստավորական խավերին պատկանող ամուրի երիտասարդներից կազմված «եղբայրության» կանոնադրությունը, որը շոշափման շատ կետեր ունի հետագայի համքարական կանոնադրությունների հետ, հրատարակեցինք մենք 1951 թվականին[2]։ Վերոհիշյալ աշխատություններում հավաքված, ինչպես նաև ուրիշների կողմից անտեսված այլ նյութերի օգտագործմամբ համքարությունների գոյության հարցը բազմակողմանիորեն ուսումնասիրեց Ռ. Առաքելյանն իր «Քաղաքները Հայաստանում IX—XIII դդ.» դիսերտացիոն աշխատության մեջ։

Համքարությունների գոյությունը հավաստող կարևոր փաստերից հիշենք մի քանիսը։

Հովհաննես Երզնկացին իր անտիպ քարոզներից մեկում, նկարագրելով արքաների թագադրության առիթով քաղաքներում տեղի ունեցող հանդեսները, հայտնում է նաև, որ «զանազան գործօնեայքն արուստիցն զիւրեանցն զարդարել փութան փողոցս»՝ այլ խոսքով՝ տվյալ է հաղորդում այն մասին, որ քաղաքներում միևնույն մասնագիտության տեր արհեստավորները գրավում էին մի փողոց կամ շարք։

Անի քաղաքի արձանագրություններում կան տվյալներ, որոնցով հաստատվում է Երզնկացու հաղորդածը։ Ըստ այդ արձանագրությունների, քաղաքն ունեցել է «բազդնոց», «կաւշկակարոց», «նալպանդնոց», «սարաճփոդոց», «փոլկարարոց» անունով փողոցներ կամ արհեստագործական շարքեր։

Քաղաքներում եղել են արհեստավորների միջև ծագած վեճերը հարթելու համար «ծերոց ատեան»-ներ[4], դատական մի մարմին, որն ազգագրական նյութերից դատելով՝ սերտ կերպով առնչվում է համքարական կազմակերպություններին։

XIX դարի համքարական կազմակերպություններում կար իգիրբաշի կոչ-

---

[1] Տե՛ս Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883, С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказье, часть II, Городские цехи, Казань, 1891. Վ. Աբրահամյան։

[2] Լ. Խաչիկյան, Երզնկայում 1280 թ. կազմակերպված «եղբայրությունը» («Տեղեկագիր», 1951, № 12, էջ 73—84)։

[3] Պետ. Մատենադարան, ձեռ. № 2173, էջ 66բ։

[4] Մխիթար Գոշ, Առակներ, կազմեց Էմ. Պիվազյան, Երևան, 1951, էջ 122։

վող մի պաշտոնյա, որի պարտականությունն էր ուսուցանել (համքարության ընտրության ավագի) կարգադրությունները համքարության անդամներին հաղորդելը։ Վերը հիշատակված մեր հոդվածում բավարար փաստերով ցույց ենք տվել, որ այդ պաշտոնը ժառանգված է միջնադարյան հայկական համքարություններից։ Մանկտավագ կամ մանգասար կոչվող պաշտոնյաները («իգիթբաշի» թուրքերեն նշանակում է հենց «մանկտավագ») միջնադարյան քաղաքներում կատարում էին կարևոր դեր, լինելով երիտասարդ քաղաքացիներից կազմված ջոկատի հրամանատար։

Վերջին դարերից մեզ հասած համքարական կազմակերպությունների ստատուտներում համքարության անդամների փոխհարաբերությունների և միմյանց նկատմամբ ունեցած պարտավորությունների մասին կան բազմաթիվ հոդվածներ։ Դրանք, իրենց մեծագույն մասով, առնչվում են Երզնկայի 1280 թ. կանոնագրության համապատասխան հոդվածներին։

Ի միջի այլոց նշենք նաև հետևյալը։ Մինչ այժմ հայկական համքարությունների մասին պահպանված հնագույն ուղղակի վկայությունը համարվում էր Էջմիածնի Մայր տաճարի վրա 1682 թ. Թիֆլիսի հայ համքարությունների փորագրել տված նվիրաբերական արձանագրությունը[1]։ Ձեռքի տակ այժմ ունենք շուրջ մեկուկես դար ավելի վաղ գրված մի փաստաթուղթ, որի մեջ պարզ ու որոշակի ասվում կա Իերկրի քաղաքում 1341 թ. ոչ շատ ուշ գոյություն ունեցած սոլկարների համքարության մասին։ «Յիշատակ է սուրբ աւետարանս սոլկար առնաֆին, ձեռամբ ուսթայ Ալիսասին» գրված է այնտեղ[2]։ Պետք չէ կասկածել, որ հայերեն ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ հնարավոր կլինի առաջիկայում լրացնել հայկական համքարությունների մասին մեր գիտելիքները։ Այժմ իսկ ձեռքի տակ ունենք նյութեր, որոնք այս կամ այն չափով նպաստում են միջնադարյան արհեստագործության հետ կապված մի շարք հարցերի պարզաբանման գործին։

Այսպես օրինակ, Գրիգոր Տաթևացին իր Քարոզգրքի ամռան հատորում ունի այսպիսի մի պարբերություն. «Զօրութիւն եպիսկոպոսին ի վերայ քահանայիցն և սարկաւագացն է, որպես զօրութիւն թագաւորին ի վերայ արուեստաւորաց քաղաքին, զի ոմն կացուցանէ վերակացու, շահնայ, ձեռնաւոր և զիւրաքանչիւր արուեստ կարգաւորէ՝ զդարբին, զոսկերիչ և զայլսն»[3]։

Նրան լրացնում է Մատթեոս Ջուղայեցին. «Մարմնաւոր կարգաւորութիւնք են Ե. (5),—գրում է նա,—նախ՝ այր և կին, երկու՝ տանուտէրն և ընտանիքն, երեք՝ վերակացուք քաղաքին և արուեստաւորքն»[4]։

Քաղաքի «վերակացուները» հսկողություն էին սահմանում արհեստավորների վրա, պահանջում, որ արտադրված ապրանքը համապատասխանի տրադիցիոն ձևին ու որակին (լինի «ըստ չափոյ և կանոնի»), նյութը խարդախված չլինի և այլն։ Ըստ երևույթին նրանք էին հավաքում արհեստավորներից պետությանը հասանելիք հարկերն ու տուրքերը։ «Արուեստաւոր՝ չկա-

---

[1] «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանյան, Պետերբուրգ, 1913, էջ 195։

[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 5067, էջ 360ա (ընդօրինակված է 1473 թվականին)։

[3] Գիրք քարոզութեան, որ կոչի ամառան հատոր, արարեալ... Գրիգորի Տաթևացւոյն, Կ. Պոլիս, 1741, էջ 179։

[4] «Քննութիւն գործոց առաքելոց», Պետ. Մատենադարան, ձեռ. № 1402, էջ 146։

բելով գործել զարուեստն՝ զրկեալ գաւառի յայնմ կոչմանէ»—գրել է XIV դարի սկզբի հեղինակ Բարսեղ Մաշկեորը[1]: Արհեստով զբաղվելու իրավունքից զրկելու հրամանը, հավանաբար, նույնպես տալիս էին այդ «վերակացուները»:

Ամեն մի արհեստավոր շահագրգռված էր իր արհեստը սովորեցնելու նախ և առաջ իր որդիներին: Համքարային արհեստագործության համար բնորոշ այս երևույթի արտացոլքը գտնում ենք միջնադարյան մի առակի մեջ, որի գլխ-հերոսը իրեն ներկայացնում է այսպիսի խոսքերով. «Մենք յազգէ յազգ մսագործ՝ մսագործի որդիք ենք»[2]:

Սակայն, սովորաբար, ամեն մի վարպետ ունենում էր աշակերտներ, պարտավորվելով որոշյալ ժամանակամիջոցում մասնագիտացնել նրանց այն աստիճանի, որ նրանք կարողանային ինքնուրույն գործ սկսել:

Ծնողները, իրենց որդիներին արհեստի տալով, վարպետի հետ կնքում էին հատուկ պայմանագիր, սահմանում ուսման ժամկետ և այլն: Այդ մասին ուշագրավ տեղեկություն է գրանցել վերը հիշատակված Բարսեղ Մաշկեորը. «Արդ,—գրում է նա,—եթէ զորդի քո յարուեստ տայիր և նա միշտ ի տան մնայր և կամ թէ այլուր խաղայր, ոչ հրաժարէր ի նմանէ ուսուցիչն և ասէր՝ ժամանակ սահմանեցեր ուսանելոյ մանկանդ և յայնքան ժամանակս ոչ կարէ դա ուսանել, դի չկայ (իմա չգայ) մօտ առ իս և ուսանի, և դայս ինձ հարկ էր, ասէ, ասել քեզ»[3]: Մեջ բերված վկայության իմաստը պարզ է. վարպետը պատասխանատվությունից խուսափելու համար, բնականաբար դիմելու է իր ծույլ աշակերտի ծնողներին՝ հրաժարվելով նրանից, կամ տեղեկացնելով, որ «սահմանված ժամանակում» աշակերտի մեղքով, չկնաք է կարողանա նրան արհեստավոր դարձնել:

1387 թ. հասել է մեզ «աշակերտի» ծնողների և «վարպետի» միջև կնքված գավեշտական մի համաձայնագիր, ըստ որի Մարգարե անունով մի երիտասարդի ծնողները իրենց որդուն որպես «հոգոյ որդի» հանձնում են Մովսես քահանային, որպեսզի սա նրան ի վերջո քահանա դարձնի: Արժե ծանոթանալ այդ համաձայնագրին.

«Յանուն աստուծոյ, ես Ովանէս կոզալիցն իմ թանկսուղ ավինք մեր աւժարութեամբ զմեր որդիս Մարգարէ՝ հոգոյ որդի Մովսէս քահանային մինչև ի մահն, որ երէց առնէ...

Ի թվ. ՊԼԶ (1387)»[4]:

Աշակերտները, դառնալով իրենց վարպետների հոգևոր որդին, նրանց մեծարում էին «հայր» պատվանունով («Եւ որք արուեստս ուսուցանեն մանկանց՝ նոցա հայրք կոչենս» գրում է այդ մասին Մատթեոս Ջուղայեցին)[5] և հաճախ, ուսումնառության ողջ ժամանակաշրջանում, բնակություն էին հաստատում վարպետների տանը: Այսպես էր վարվել, օրինակ, թամբագործ ու քսակակար Ավագը, որը «ելեալ երթե

թեան ընդ արուեստապետին իւրոյ ումեմն Պարսկի և մահմեդականի, ի տղայութեան ժամանակի ընդ նմին կեցեալ վասն օգտութեան արուեստին[1]։

Ծանր է եղել աշակերտների վիճակը։ Նրանց ժամանակի մեծագույն մասն անց է կացել ուսուցչի տանն ու արհեստանոցում հոգնեցուցիչ ու սնագործ աշխատանքի մեջ։ Այս կապակցությամբ պերճախոս տվյալ է հաղորդում Սարգիս Շնորհալին (XII դար). չար մարդիկ,—ասում է նա,— երբ տեսնում են վարդապետի, որը զդմի ոք աշակերտ ունիցի, որ վկարևոր պէտս նորա վճարիցէ, զի մի անձամբ ջրարերս լինիցի և փայտակոտոր և հրավառ... բամբասեն, երգիծանեն, մեծատուն է, ասենք»։ Պարզ է ասված. աշակերտ էին պահում, նրան օգտագործելուհամար որպես ջուր բերող, փայտ կոտրող, թոնիր վառող և այլ սև աշխատանքներ կատարող։

Ծեծը խրատելու և ուսուցանելու համընդհանուր ու տարածված միջոց է եղել։ XIII դարում ընդօրինակված մի կանոնագրքի մեջ հանդիպել ենք հատուկ հոդվածի, որով 7 տարվա ապաշխարություն է սահմանված այն վարդապետի համար, որը գազանաբար ծեծելով կսպանի իր աշակերտին[3]։

Աշակերտի անվճար ու չսահմանափակված աշխատանքը հնարավորին չափ երկար շահագործելու դիտավորությամբ վարպետները շարունակ ձգտել են երկարաձգել ուսումնառության ժամանակաշրջանը։ Այնքան դանդաղ են մատուցել նրանք իրենց արհեստի գաղտնիքները աշակերտներին, որ ժամանակակիցները, երբ ցանկացել են ճանաչված ու հասկանալի օրինակ բերել «սակաւ սակաւ» մի բան անելու, հիշել են իսկույն աշակերտի ուսումնառությունը վարպետի մոտ[4]։

Աշակերտն ստիպված է եղել լուռ ու մունջ, երկար տարիների ընթացքում, հնազանդվել իր վարպետին, կատարել նրա բոլոր պահանջներն ու հրամանները, որովհետև այլ ճանապարհ չի եղել արհեստը տիրապետելու և ինքնուրույն գործ սկսելու։

«Զի որպէս տղայն,—ասում է այդ մասին Բարսեղ Մաշկևորը,—ոչ ընդդիմանայ ուսուցչին և ոչ հարցաքննէ իրաւունս հակառակելով, այլ խոնարհութեամբ հնազանդի և երկիւղիւ չափաւորեալ զինքն՝ յայնժամ կարէ մտանել յարուեստն»[5]։

Միջնադարյան հայկական արհեստագործության մեջ եղել են նաև ենթավարպետներ։ Այդ մասին որոշակի տվյալ է հաղորդում Հովհան Որոտնեցին Տաթևի վանքի տաճարի և զանգակատան շինության առթիվ արտասանած ճառի մեջ («Ի յորհնութիւն նորակերտ շինուածոյ տաճարին և զանգակատանն... վանիցն Ստեփէի»)։ Նա գովասանքի ու շնորհակալության խոսք է ուղղում շինարարական աշխատանքներին մասնակցած բոլոր անձանց. հատկապես գրվատանքի է արժանանում ճարտարապետը («մանաւանդ զիմաստուն ճարտարապետ և զհանճարամիտ վարպետն»). սա աշխարհական մարդ

---

[1] Հայոց նոր վկաները, գիտ. հրատ. էջ 157.

[2] Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եոթանց թղթոց կաթուղիկեայց, Կ. Պոլիս, 1826, էջ 654։

[3] Պետ. Մատենադարան, ձեռ, № 715, էջ 9ա։

[4] Այսպես օրինակ, Հովհան Որոտնեցին իր աշխատություններից մեկում խորհուրդ է տալիս եկեղեցու քարոզիչներին «սակաւ սակաւ խրատու» խելքի բերել անհավատներին, ճիշտ այնպես ինչպես արհեստավորն է ուսուցանում իր աշակերտին. «զորօրինակ արուեստաւոր զաշակերտս իւր» (Պետ. Մատենադարան, ձեռ. № 5871, էջ 19բ)։

[5] «Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Մարկոսի», էջ 67։

է, ունի որդիներ, աշխատել է ոչ միայնակ, այլ «աշխատակցօք և աշակերտեալ մանկամբ»[1]։

«Աշակերտեալ մանուկ» տերմինը մեկնության կարոտ չէ, իսկ «աշխատակից» տերմինը, անշուշտ, նշանակել է ենթավարպետ (հմմտ. պրսկ. քաղզահ, ռուս. работник են)։ Ենթավարպետները մեր ձեռագրական աղբյուրներում հիշվում են նաև «փոքր (կամ՝ փոքրագույն) արուեստաւոր» և «օգնական» կոչումներով։

Արտադրության պրոցեսում նրանց կատարած դերի մասին կան մի-երկու անուղղակի վկայություններ։

Բարթողիմեոս Բոլոնիացին (XIII դարի 30-ական թթ.) գրում է. «Յորժամ շինեալ լինին ապրանք և լինին անդ փոքրագոյն արուեստաւորք և մեծամեծք, և զի թէպէտ երկոքն առնեն զգործն, այլ որ մեծ ճարտարապետն է՝ նայ ածէ ի կատարումն շինուածն»[2]։

Գրիգոր Տաթևացին լրացնում է իր նախորդին. «Փոքր արուեստաւորքն—գրում է նա,—պատրաստէ զնիւթն և գլխաւորն տա ղտեսակ գործոյն»[3], իսկ Առաքել Սյունեցին ավելացնում է՝ «Արուեստն ոչինչ կարեն առնել առանց օգնականի»[4]։

Այս մեջբերումները թույլ են տալիս եզրակացնելու, որ ենթավարպետները ծանոթ են եղել արհեստի տվյալ մասնաճյուղի արտադրության պրոցեսին, մասնակցել են նրան, բայց մասնագիտական խոր պատրաստություն պահանջող ու հիմնական աշխատանքը, այնուամենայնիվ, կատարել է վարպետը («գլխաւորը», «մեծ ճարտարապետը»). նա էր, որ «ածէր ի կատարումն շինուածն»։

Վարպետները շահագործում էին ենթավարպետների ու աշակերտների աշխատանքը. նրանց միջև տնտեսական հողի վրա շարունակ տեղի էին ունենում վեճեր, թշնամանք ու պայքար։ Այս մասին հետաքրքրական վկայություն է պահպանվել Հակոբ Կլայեցու մեզ արդեն ծանոթ «Մեկնութիւն նուրբ գրեանց» աշխատության մեջ. խարազանելու համար կղերականների նախանձն ու հակառակությունը միմյանց նկատմամբ, Կլայեցին կատարում է օգտակար մի համեմատություն. «թէ զոր ինչ յարտաքին արուեստաւորսն տեսանեմք,—գրում է նա,—որ նախանձին ընդ իրեարս և հակառակին, մանաւանդ փորձքն՝ այսինքն ընդիր արուեստաւորքն՝ ի վայր հարուն զախմարսն և նոքա նախանձեն ընդիրսն»[5]։

Այսպիսով, միջնադարյան հայկական քաղաքների արհեստավորները աշխատում էին՝ ձեռքի տակ ունենալով ենթավարպետներ ու աշակերտներ։ Նրանք, բոլորն էլ, տարբեր չափերով մասնակցում էին արտադրության պրոցեսին, սակայն ոչ ենթավարպետը, ոչ էլ աշակերտը վարպետի վարձկան բանվորները չէին. նրանք, որոշ ժամանակ անց, իրենք դառնալու էին վարպետներ։

Արհեստավորները, առիթից-առիթ, որևէ բեռ տեղափոխելու կամ արտադրության հետ անմիջապես չառնչվող որևէ սև աշխատանք կատարել տալու

---

1 Պետ. Մատենադարան, ձեռ. № 1843, էջ 185ա։
2 «Քարոզգիրք», Պետ. Մատենադարան, ձեռ. № 2181, էջ 201ա։
3 «Մեկն. Մատթէոսի աւետարանին», Պետ. Մատենադարան, ձեռ. № 1198, էջ 289բ։
4 «Քարոզ տարեմտին», Պետ. Մատենադարան, ձեռ. № 969, էջ 12բ։
5 Պետ. Մատենադարան, ձեռ. № 598, էջ 172բ։

համար՝ վարձում էին մշակներ կամ վարձկաններ։ Դրանց մասին մանրամասն խոսք կլինի առանձին, նշենք այստեղ, որ սկզբնաղբյուրներում չկա գեթ մի հատիկ վկայություն կամ տկնարկ այն մասին, որ վարձկանները մասնակցել են արտադրության պրոցեսին։

Այսպիսով, ամենայն իրավամբ, կարող ենք եզրակացնել, որ X—XIV դարերի Հայաստանի արհեստագործության մեջ վարձու աշխատանք չէր կիրառվում, հետևաբար արտադրության մեջ գեռևս չէին նկատվում նույնիսկ թույլ սաղմեր կապիտալիստական կամ վաղ-կապիտալիստական արտադրական հարաբերությունների։

Մեր այս եզրակացությունն առավել կամրապնդվի, երբ մենք, ընդհանուր գծերով ծանոթանանք արհեստավորի և պատվիրատուի կամ գնորդի փոխհարաբերություններին։

Քննության ենթակա ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքների արհեստավորները, եթե միայն նրանց արտադրանքը դուրս չէր հանվում երկրից, կապվում էին գնորդի կամ պատվիրատուի հետ առանց միջնորդի, անձամբ։ Արտադրվելիք ապրանքի նյութը շատ դեպքերում տալիս էր ինքը պատվիրատուն։

Այս մասին վկայություն կա Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երկրորդ մասի 124-րդ «Յաղագս դատաստանից բնաւից արուեստականաց իարդախոդաց» խորագիրը կրող հոդվածում։ Այնտեղ գրված է. «Արուեստաւորք ամենայն, ըստ որում և իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն և եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեառն գործիցեն, այլ և զնիւթն ապականիցեն, դատաստան է ըստ հաճոյից նոցա առնել դարձեալ, կամ զապականեալն ի գնոյն ըստ արժանւոյն լնուլ և ապա լիով հասանել վարձու...»[1]։

Այս հոդվածն հետաքրքրական է մի քանի կողմերով. առայժմ ուշադրություն դարձնենք հոդվածի այն տվյալի վրա, ըստ որի արհեստավորն աշխատել է պատվիրատուի նյութով և պարտավորված է եղել, այն փչացնելու կամ պատվերի համաձայն չմշակելու դեպքում, վճարել նյութի արժեքը, ապա միայն ստանալ իր աշխատանքի վարձը լիովին։

Այս եզրակացությունն ամրապնդվում է մատենագրական բազմաթիվ այլ վկայություններով։

Այսպես օրինակ, Ներսես Շնորհալին իր «Յիսուս որդի» պոեմում գրում է.

«...Որք յաշխարհի գործ արուեստին
Ի յերկաթոյ կամ արծաթին[2]
Եւ կամ յայլ ինչ նիւթեղենին
Զանարքս նիւթոցն ննդեցին
Հատուցանեն անդրէն նոցին
Ի քո արդար դատաստանին»[3]։

---

[1] Մխիթարայ Գոշի, Դատաստանագիրք հայոց, հրտ. Վ. Բատամյանի, Վաղարշապատ, 1880, էջ 436։

[2] Այս տողը ձեռագրերում հանդիպում է «Ամ ի յոսկոյ կամ յարծաթին» տարբերակով (տե՛ս օրինակ, Պետ. Մատենադարան, ձեռ. № 2236, էջ 419ա)։

[3] Գիրք որ կոչի Յիսուս որդի, Ս. Պետերբուրգ, 1785, էջ 173—174։

Գրիգոր Տաթևացին իր քարոզներից մեկում գող ու գրկող է կոչում այն արհեստավորին, որն «ի յարուեստն ՁԵսասէ և խառնէ և կամ զայն նիւթն, զոր էառ պակասեցուցանէ»[1]։

Այդ մասին խոսում է նաև Մատթեոս Ջուղայեցին. «Գողք կոչին արուեստաւորք,—գրում է նա,—որք առնուն յայլոց նիւթ, և խորեն ի գործելն, և ի պահանջելն ուրանան»[2]։

Տաթևացու աշակերտ Հովհան Կոլոտիկը, հեղինակ «Մեկնութիւն Եսայեայ» աշխատության, ուղղակի հայտնում է, որ արհեստավորները որևէ բան արտադրելու համար «նիւթ խնդրենն»[3]։

Այս կարգի վկայությունների թիվը կարելի է բազմապատկել, սակայն բերվածն էլ բավական է համոզվելու համար այն բանում, որ հայ արհեստավորը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հիմնականում աշխատում էր պատվիրատուի նյութի վրա, ըստ նրա պահանջի արտադրելով հարկ եղած ապրանքը.

Պատվիրատուի և արհեստավորի միջև այս կարգի հարաբերությունը բնորոշ է ապրանքային արտադրության խիստ ցածր մակարդակին, երբ Կ. Մարքսի արտահայտությամբ „Предложение подчинено спросу и поэтому производство расширяется лишь медленно“[4].

Չի կարելի տարակուսել այն բանում, որ արհեստավորը, պատվիրատուից նյութ ստանալուց բացի ինքը ևս նյութ էր ձեռք բերում և պատրաստում իր արվեստին համապատասխան ապրանք՝ վաճառելու համար։ Այս դեպքում ևս, եթե միայն արտադրված ապրանքը չէր արտահանվում երկրից դուրս, արհեստավորը կապվում էր գնորդի հետ անմիջականորեն, առանց միջնորդի։

Հակոբ Կլայեցին մեր կողմից մի քանի անգամ արդեն հիշատակված իր աշխատության մեջ խոսում է ինչ-որ կրպակավորների մասին։ Վանական արհեստավորներին նա խորհուրդ է տալիս իրենց արտադրանքը վաճառելու համար քաղաք տանելիս՝ ընկերանալ և միասին գնալ («ամենայն ոք զիւրն ժողովէ ի միասին զվաճառսն և ապա ճանապարհակցին»), որովհետև «բազումքն ի միասին... պնդութիւն են միմեանց... յաւազակացն... ի ճանապարհին», մեծ վտանգ են ներկայացնում նաև կրպակավորները. «կրպակաւորքն Ջանան խարել զվաճառն և զրազումն ինքեանց առնել, ընդ բազումն անՁնաս անցանէ խարէութիւնն նոցա և ոչ կարէ Ձնասել, կամ բազումք անՁնաս անցանեն քան մին, զի երկնչին ի բազմացն, զուցե վկա լիցին միմեանց առաջի դատաւորաց»[6]։

Այս մեջբերումներից կարելի է հետևցնել, որ կրպակավորները քաղաքի շուկաներում կրպակ ունեցող առևտրականներ էին, որոնք հնարավորության դեպքում չէին խորշում խարել իրենց արտադրանքը վաճառելու համար քա-

---

[1] Գիրք բարոյութեան, որ կոչի ամառան հատոր, էջ 25—26։

[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 2229, էջ 133ա։

[3] Պետ. Մատենադարան, ձեռ. № 1128, էջ 186ա։

[4] *К. Маркс*, Формы предшествующие капиталистическому производству, 1940, стр. 50.

[5] Հմմ. Մխիթարայ Գոշի, Դատաստանագիրք հայոց, էջ 137, ձիի հոդվածի շարունակությունը։

[6] «Մեկնութիւն նուրբ գրեանց», Պետ. Մատենադարան, ձեռ. № 598, էջ 176ա։

դաք բերողներին, նույնիսկ երբ նրանք վանական-արհեստավորներ լինեին։ Հասկանալի է, որ էժան գնով ձեռք բերած ապրանքը նրանք թանկ գնով վաճառելու էին իրենց կրպակներում. Հակոբ Կլայեցին այդպես էլ ասում է՝ «ջանան խարել զվաճառն և զրաղումն ինքեանց առնել»։

Ա-հեստավորներն իրենց աշխատանքի վարձը հիմնականում ստանում էին դրամով։

Մատթեոս Ջուղայեցին իր «Հաւաքումն բանից, որ հայի առ Զ. աւուր գործս ասասիծոյ» աշխատության մեջ փորձում է սպառիչ պատասխան տալ այն հարցին, թե՝ ինչի՞ համար են ստեղծված ոսկին ու արծաթը։ Նրա կարծիքով պատճառներից մեկն էլ այն է, որ առանց ոսկու և արծաթի արհեստավորներն ու առևտրականները չէին կարող գնել ու վաճառել. նա գրում է. «գործաւորք և վաճառականք ի՞ւ վաճառէին և գնէին. վասն որոյ զայսպիսի նիւթս արար (աստուած), զի զմիմեանց կարիս լցցեն և աջողեսցի շինութիւն աշխարհիս»[1]։

Մխիթար Գոշի «Բատաստանագրքից» վերը մեջ բերված 114-րդ հոդվածում, ինչպես տեսանք, կար այսպիսի արտահայտություն. «Արուեստաւորք ամենայն... եթէ հատուածով գործիցեն և եթէ վարձով...»։ Ուշագրավ այս հատվածից դժվար չէ եզրակացնել, որ դրամական վարձատրությունից բացի, արհեստավորներն աշխատել են նաև «հատվածով» այսինքն՝ աշխատավարձի դիմաց ստացել պատվիրատուի նյութի մի մասը—«հատվածը», այն մշակելու և վաճառելու համար։

Ըստ երևույթին կիրառվել է նաև ապրանքափոխանակություն. որևէ արհեստավոր իր պատրաստի արտադրանքը փոխանակել է մի այլ արհեստավորի արտադրանքի հետ։ Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի ձեռագրերից մեկում մի արհեստավոր (հավանաբար կտավագործ) գրանցել է մանր հաշիվներ. դրանցից մեկը կարդացվում է այսպես. «կտաւ մի փալնի շինելէ տվաք»[2], այսինքն՝ մի համեստ (փալան) կամ, թերևս, բանալի շինողին որպես աշխատավարձ տվել է մի կտավ։

Այսպիսով, պարզվում է, որ արհեստավորներն իրենց աշխատավարձն ստանում էին հիմնականում դրամով, սակայն դեռևս տարածված էր նյութի ավելցուկը որպես աշխատավարձ արհեստավորին թողնելու, ինչպես նաև տարբեր արհեստավորների արտադրանքը միմյանց հետ փոխանակելու պրակտիկան, մի բան, որը նույնպես ցուցանիշ է ապրանքային արտադրության զարգացման ցածր մակարդակի։

Միջնադարյան հայկական քաղաքների արհեստագործության զարգացման աստիճանի, կազմակերպչական սկզբունքների և հարակից հարցերի մասին վերը մեջ բերված նյութերը, ինչքան էլ նրանք միակողմանի լինեն ու ակնարկային, այնուամենայնիվ բավարար են X—XIV դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը հիմնական կոնտուրներով պատկերելու համար։ Այդ փաստերը միարերան վկայում են այն մասին, որ հայկական քաղաքներում արհեստները կազմակերպված են եղել միջնադարին հատուկ համքարային սկզբունքներով։ Զարգացած ֆեոդալիզմի ժամանակա-

---

[1] Պետ. Մատենադարան, ձեռ. № 774, էջ 332բ։

[2] Պետ. Մատենադարան, ձեռ. № 5910, էջ 117բ (կտավագործի գրանցումները ըստ հնագրական տվյալների, գրված պետք է լինեն հավանաբար XVI դարում)։

շրջանում գյուղական նատուրալ տնտեսությանը համապատասխանում էր քաղաքում համքարային կազմակերպությունը։ Եվ մեկը և մյուսը արտադրության ֆեոդալական եղանակի տարբեր կողմերն էին. միևնույն օրենքն էր գործում և գյուղացու նատուրալ տնտեսության, և համքարային արհեստագործության մեջ՝ պարզ վերարտադրության օրենքը։ Վ. Ի. Լենինը գրել է. „Законом докапиталистических способов производства является повторение процесса производства в прежних размерах, на прежнем основании: таково барщинное хозяйство помещиков, натуральное хозяйство крестьян, ремесленное производство промышленников"[1].

Մանուֆակտուրային արտադրության ամենապարզ ձևերի առկայությունը հավաստող որևէ տվյալի բացակայությունը[2] լիակատար իրավունք է տալիս հաստատապես պնդելու, որ X—XIV դարերում քաղաքային արհեստագործության մեջ կապիտալիստական կամ վաղ-կապիտալիստական արտադրության նույնիսկ թույլ սաղմեր դեռևս չէին առաջացել Հայաստանում։

Մարքսը համքարային արհեստագործության և մանուֆակտուրայի միջև գոյություն ունեցող անջրպետի մասին գրել է.

«Համքարային օրենքները, ինչպես արդեն հիշատակվեց, խիստ կերպով սահմանափակելով այն ենթավարպետների թիվը, որոնց աշխատանք տալու

---

[1] *В. И. Ленин,* Сочинения, т. 3, стр. 44.

[2] Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Զալոյանը «Հայկական վերածնության մասին» իր հոդվածում (տես «Տեղեկագիր», 1955, № 12, էջ 85—114) մեր կողմից 1944 թ. (ասպիրանտական շրջանում) գրված և 1947 թ. տպագրված «Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12—14-րդ դարերում» (Ն. Մառի անվան կաբինետի «Աշխատություններ» № 2, էջ 181—209) հոդվածից քաղել է ձեռագրական մի տվյալ, ուր ասված է, որ «վարձու աշխատողները սովորել են վերակացուն երևալիս ջանասիրություն ցուցաբերել աշխատանքում» (թարգմանել է ինքը՝ Վ. Զալոյանը)։ Զսպարգելով թե ո՞վ է այդ տվյալի հեղինակը և խորամուխ չլինելով նրա բովանդակությանը, ընկ. Զալոյանը եզրակացրել է, թե «Այստեղից հետևում է, որ միևնույն արտադրական ձեռնարկություններում աշխատել են այնպիսի քանակությամբ վարձու աշխատողներ, որ անհրաժեշտ է եղել նրանց նկատմամբ հսկողություն սահմանել ի դեմս հատուկ պաշտոնատար անձի՝ վերակացուի, որն անշուշտ, մեկը չի եղել» («Տեղեկագիր», 1955, № 12, էջ 99)։

Պարզվեց, որ այս տվյալի հեղինակը Գրիգոր Տաթևացին է (տե՛ս «Գիրք քարոզութեան, որ կոչի ձմռան հատոր», էջ 459), որը իր աշխատություններում բազմիցս խոսել է երկրագործության մեջ աշխատող վարձկանների մասին։ Այս տվյալը բնավ բացառություն չի կազմում և դարձյալ վերաբերում է երկրագործական աշխատանքների համար վարձված մշակներին, որովհետև եթե իրոք Հայաստանում եղած լինեին մանուֆակտուրային տիպի արտադրական ձեռնարկություններ, որոնցում, մի հարկի տակ, այն էլ (ինչպես կարծում է ընկ. Զալոյանը) մի բանի վերակացուների հսկողությամբ աշխատեին վարձկաններ, ապա այդ վերակացուները միշտ էլ «կերևային» վարձկաններին ու շարունակ կհսկեին նրանց աշխատանքը, ուստի և Տաթևացին չէր գրի ընկ. Զալոյանին դայթակղած «Սովոր են վարձկանք փոյթ առնել գործոյն մերձ գալով վերակացուին» նախադասությունը։

Հայաստանում մանուֆակտուրային տիպի արտադրական ձեռնարկությունների գոյության մասին ընկ. Զալոյանի ձեռքի տակ եղած միակ «փաստը» այս է. և ցնում է զարմանալ, որ նա իր իսկ խոսքերով՝ «ձեռքի տակ չունենալով բավականաչափ ծանրակշիռ փաստեր», այնուամենայնիվ հնարավոր է համարել անել այսպիսի հայտարարություն. «... պնդում ենք(!), որ այն ժամանակվա Հայաստանի էկոնոմիկայում անպայման(!!), գոյություն են ունեցել պարզ կոոպերացիան ու մանուֆակտուրան. գերազանցապես(!!!) վարձու աշխատանքի հիման վրա» («Տեղեկագիր», 1955, № 12, էջ 99։ Ընդգծումները մերն են—Լ. Ա.)։

իրավունք ուներ մեկ վարպետը, դրանով էլ հենց պլանաչափորեն արգելք էին լինում համքարային վարպետների կապիտալիստ դառնալուն... Համքարությունն իրեն եռանդագին պաշտպանում էր վաճառականական կապիտալի,— համքարությունների դեմ կանգնած կապիտալի այդ միակ ձևի,—ամեն մի ոտնձգությունից։ Վաճառականը կարող էր ամեն տեսակ ապրանք գնել, բայց ոչ աշխատանքը որպես ապրանք։ Նրանք հանդուրժում էին լոկ իբրև արհեստի արդյունքի հավաքագնորդի։ Եթե արտաքին հանգամանքները առաջ էին բերում աշխատանքի արագ ընթացող բաժանում, ապա գոյություն ունեցող համքարությունները տրոհվում էին ենթատեսակների, կամ նոր համքարություններ էին հիմնվում հների կողքին, սակայն առանց տարբեր արհեստները միավորելու միևնույն արհեստանոցում։ Այսպիսով, թեև համքարային կազմակերպությունը առաջ էր բերում արհեստների առանձնացում, մեկուսացում ու զարգացում և դրանով մանուֆակտուրային ժամանակաշրջանի նյութական նախադրյալ էր ծառայում, այնուամենայնիվ, ինքը՝ համքարային կազմակերպությունը, բացառում էր աշխատանքի մանուֆակտուրային բաժանման հնարավորությունը։ Ընդհանուր առմամբ և ամբողջությամբ բանվորն այնքան էր սերտաճում իր արտադրամիջոցի հետ, որքան խխունջը խեցեպատյանի հետ, և. հետևապես, պակասում էր մանուֆակտուրայի առաջին հիմքը՝ արտադրության միջոցների առանձնացումը, որպես բանվորի դեմ կանգնած կապիտալ»[1]։

Համքարային արհեստագործության սոցիալ-տնտեսական բազայի ու պատմական դերի, նրա և մանուֆակտուրային արդյունաբերության միջև եղած սկզբունքային տարբերության հանճարեղ այս վերլուծությունը, որ կատարել է Մարքսը արևմտաևրոպական երկրների պատմական զարգացման ընթացքի խորաթափանց ուսումնասիրությամբ, ինչպես այդ մասին վկայում են սույն հոդվածում մեջ բերված արհեստագործության վիճակի տարբեր կողմերը լուսաբանող մատենագրական բազմաթիվ տվյալները, լիովին վերաբերում է նաև արևելյան երկրների, տվյալ դեպքում Հայաստանի պատմությանը։

[1] Կ. Մարքս, Կապիտալ, առաջին հատոր, Երևան, 1954, էջ 378։